



## ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՈՐՈՆՄԱՆ

### ԴԺՎԱՐ ԲԱՆԱՁԵՎԸ...

**Հիմնաբառեր.** *խաղաղություն, ռազմավարություն, կայունություն, զարգացում, ՀԱՊԿ, բարձր տեխնոլոգիաներ, գիտական ներուժ*

### Սուսաննա ԱՂԱՋԱՆՅԱՆ

Տնտեսագիտության թեկնածու

2003 թ. գերազանցությամբ ավարտել է ԵՐՊՏԻ-ն (այժմ՝ ՀՊՏՀ)՝ «Համաշխարհային տնտեսագիտություն» մասնագիտությամբ: 2007 թ. ստացել է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան և աշխատանքի անցել ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերություններ ամբիոնում որպես ասիստենտ: Հեղինակ է 12 գիտական աշխատանքների:

Հայաստանի ազգային անվտանգությունը հիմնը-ված է երկու բաղադրիչի վրա. առաջինը վերաբերում է Ռուսաստանին՝ որպես հավաքական անվտանգության համակարգի հիմնական օղակ, երկրորդն ուղղված է եվրոպական գործընկերությանը, որը որոշում է Հայաստանի ինտեգրման քաղաքականությունը եվրոպական անվտանգության նոր կառույցների ձևավորման գործընթացին, ինչպես նաև հայ-ամերիկյան համագործակցության զարգացման աստիճանը: Վտանգների համալիր բնույթը, բազմաբևեռությունը և անկանխատեսելիությունը պահանջում են ոչ միայն անվտանգության ապահովում, այլև այդ առումով համակարգային մոտեցման մշակում, անցում համալիր հայեցակարգի, որի հիմքում ոչ միայն ռազմական և տեխնիկական, այլև գոյություն ունեցող հիբրիդային վտանգների կանխարգելման միջոցառումներն են:

Հայաստանի տարածքն անվտանգության տեսանկյունից նման է ձգված զսպանակի, որի թուլանալու դեպքում կարող են ակտիվանալ ռազմական բախումները, հաճախ նաև՝ արտաքին գործոնների ազդեցությամբ: Հայաստանին պետք է ուժերի հաշվեկշիռ, բայց ոչ միայն ռազմական, այլև տնտեսական, նորարարական ու գիտական:

**XXI** դարում, անվտանգության և կայունության ապահովման առումով, աշխարհում տեղի ունեցող բազմամակարդակ գործընթացները վկայում են խաղաղության նոր ուրվագծերի ձևավորման անհրաժեշտության, իսկ քաղաքական, ինչպես նաև սպառազինությունների շարունակական աճի և արդիականացման գործընթացները՝ ուժի գործոնի աճի մասին:

2018 թ.-ին 1 տրիլիոն 822 միլիարդ ԱՄՆ դոլար է

ծախսվել աշխարհում սպառազինությունների վրա, որը նախորդ տարվա համեմատ ավելացել է 2,6%-ով: Ընդ որում, այս ցուցանիշով առաջատար են ԱՄՆ-ը, Չինաստանը, Սաուդյան Արաբիան, Հնդկաստանը և Ֆրանսիան<sup>1</sup>: Նման միտումը, անշուշտ, խարխուլում է համաշխարհային անվտանգության համակարգը:

Ասանագիտական գրականությունում պատերազմը դիտարկվում և վերլուծվում է որպես միջազգային քաղաքականության սուբյեկտների կոնվենցիոն հակազդեցություն: Սակայն, այս դեպքում հաշվի չի առնվում, որ ժամանակակից պատերազմները հաճախ սկսվում են «մոխրագույն գոտում», այսինքն՝ միջազգային իրավունքի շրջանակներից դուրս և իրականացվում տեղեկատվական, կիբեռնետիկական, մշակութային, կոգնիտիվ տիրույթներում, հիմնականում՝ ոչ ռազմական մեթոդներով և անկանոն կազմավորումների ներգրավմամբ (խոտվարարներ, ահաբեկիչներ և այլն): Այս ամենի հետևանքով ժամանակակից պետական հակազդեցությունը դառնում է ավելի բարդ և համալիր խնդիր՝ պահանջելով զսպման նոր կառուցակարգերի ներդրում<sup>2</sup>:

Հայաստանը, որպես տարածաշրջանային և համաշխարհային ինտեգրման գործընթացներում ներգրավված երկիր, դիտարկվում է իբրև այդ գործընթացների լիիրավ մասնակից: Ինտեգրումը ենթադրում է միջազգային ասպարեզում մասնակցություն այնպիսի գործընթացների, որոնք համահունչ են հանրապետության հռչակած ազգային շահերին և նպատակներին: Ռազմավարական հարաբերությունները Ռուսաստանի հետ, զարգացման եվրոպական ուղղվածության ընտրությունը, մասնակցությունը Եվրոպայում և հետխորհրդային տարածքում ընթացող միասնացման գործընթացներին, համագործակցությունը ԱՄՆ-ի և Իրանի հետ, ՀԱՊԿ-ին անդամակցությունը, ՆԱՏՕ-ի հետ համագործակցության զարգացումը ընդլայնում

են փոխլրացման քաղաքականության իրագործման ներուժ<sup>3</sup>:

Միաժամանակ, Արցախի չկարգավորված հարցը, բռնի բախումների հետևանքով առաջացած ուղղակի սպառնալիքին զուգահեռ, սրում է մարդկային անվտանգության մի շարք անուղղակի ռիսկեր: Ենթակառուցվածքների փլուզման և հանրային ծառայությունների չմատակարարման պատճառով անկում է ապրում վիճարկվող տարածքներում հայտնված մարդկանց կյանքի որակը:

Մեր օրերում, երբ դիվանագիտական համապարփակ լուծումները խուսափողական բնույթ են կրում, ընդհանուր համաձայնեցված ռիսկերի և սպառնալիքների վրա կենտրոնացումը կարող է տարածաշրջանային ցանցերում և հարթակներում ներգրավել հիմնական դերակատարներին: Դրա վկայությունն է այն, որ թեև այսօր Արցախի և Ադրբեջանի միջև պատերազմն ըստ էության դադարել է, սակայն հակամարտությունն ամբողջությամբ լուծված չէ և զարգացման ու ՀՀ տարածք տեղափոխման հավանականություն ունի:

Այս տեսանկյունից, *անհրաժեշտ է ընդգծել Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության երկու բաղադրիչ՝ իրարից անբաժան և փոխկապակցված, որ իրականում արտացոլում են կոմպլեքսիտետարության սկզբունքը պետության արտաքին քաղաքականության մեջ: Առաջին բաղադրիչն է ռուս-հայկական ռազմավարական գործընկերությունը: Այդ փոխադարձ հարաբերությունները թելադրվում են երկու ժողովուրդների միջև ինչպես դարավոր բարեկամությամբ, այնպես էլ բազմաթիվ միջազգային պայմանագրերով և համաձայնագրերով՝ ըստ որոնց կարգավորում են երկկողմանի հարաբերությունները և ապահովում դրանց կայուն զարգացումը: Ռուս-հայկական համագործակցության օգտագործումն ի շահ Հայաստանի բխում է երկու երկրների երկարամյա ռազմավարական շահերից: Սկզբնական ռազ-*

<sup>1</sup> SIPRI: Расходы на вооружения в мире достигли рекордного уровня. События в мире - оценки и прогнозы из Германии и Европы | DW | 28.04.2019.

<sup>2</sup> Коданева С.И. (2020), Гибридные угрозы» безопасности России: выявление и противодействие // Контуры глобальных трансформаций: политика, экономика, право. Т. 13. № 2. С. 44–71. DOI: 10.23932/2542-0240-2020-13-2-3.

<sup>3</sup> Котанджян Г. С., Некоторые перспективы архитектуры безопасности на Южном Кавказе в свете политики США // Вопросы региональной безопасности. Сборник статей. Ереван. Центр стратегического анализа «Спектр». 2005.

մաքադաքական իրականության մեջ Հայաստանն ուղղորդվում է իր անվտանգության հուսալի երաշխիքների ստեղծման սկզբունքով, և, այս իմաստով, ռուս-հայկական ռազմավարական գործընկերության դերը դժվար է գերազնահատել<sup>4</sup>:

Երկրորդ բաղադրիչը եվրոատլանտյան ուղղվածությունն է՝ կապված Հայաստանի՝ Եվրոպայում զինված ուժերի մասին պայմանագրում ու ՆԱՏՕ-ի «Համագործակցություն հանուն խաղաղության» ծրագրում մասնակցության հետ:

Ըստ այդմ՝ Հայաստանի ազգային անվտանգությունը հիմնված է երկու բաղադրիչի վրա. առաջինը վերաբերում է Ռուսաստանին՝ որպես հավաքական անվտանգության համակարգի հիմնական օղակ, երկրորդն ուղղված է եվրոատլանտյան գործընկերությանը և որոշում է Հայաստանի ինտեգրման քաղաքականությունը եվրոպական անվտանգության նոր կառույցների ձևավորման գործընթացին, ինչպես նաև հայ-ամերիկյան համագործակցության զարգացման աստիճանը՝ կապված համաշխարհային բնույթի խնդիրների դեմ պայքարում միջազգային հանրության ջանքերի միավորման հետ: Ընդ որում, ինչպես հաճախ նշվում է, հայ-ամերիկյան ռազմական համագործակցությունը չի կարող փոխարինել հայ-ռուսականին, քանզի բացարձակ այլ հարթության վրա է<sup>5</sup>: Տարածաշրջանային անվտանգության հարցերում հետևելով արտաքին քաղաքականության կոմպլեմենտարության սկզբունքին՝ Հայաստանը ելնում է այն մեկնակետից, որ հավաքական անվտանգության ապագա համակարգը կարող է արդյունավետ լինել, եթե այն իրականում կրի համալիր բնույթ: Տարածաշրջանային համընդհանուր համագործակցության համակարգն անվտանգության բնագավառում պետք է ներառի տնտեսական փոխներգործության մի խումբ հարցեր, որոնցում պետք է ամրագրված լինեն ժողովրդավարական արժեքների և բարեփոխումների ընդհանրության սկզբունքները, ինչպես նաև տարածաշրջանում առկա բախումների և հակադրությունների լուծման գործ-

ընթացները պետք է համախմբել համալիր և համապարփակ անվտանգության կառուցակարգերի միջոցով:

Հավաքական անվտանգության պայմանագիրն ունի մոտ 18-ամյա պատմություն: Ի սկզբանե դա ընկալվում էր որպես հավաքական պաշտպանության պայմանագիր, այսինքն, ամենից առաջ, որպես «ավանդական» սպառնալիքներին արձագանքելու ռազմավարություն: «Ավանդական» սպառնալիք ասելով նկատի են առնվում այն իրողությունները, որոնք կարող են հանգեցնել միջպետական միջուկային կոնֆլիկտի կամ լայնածավալ պատերազմի՝ կիրառելով սովորական սպառազինություն: Այդ տիպի սպառնալիքներին դիմակայելու համար նախատեսված է զորքերի երեք տարածաշրջանային խմբավորումների ձևավորում: Այսօր արդեն ՀԱՊԿ-ը բավական կայացած կառույց է, որը հաջողությամբ ինտեգրվում է անվտանգության ապահովման միջազգային համակարգին:

Ներկայում ձևավորվել և գործում են Արևելաեվրոպական (Ռուսաստան - Բելառուս) և Կովկասյան (Ռուսաստան - Հայաստան) խմբավորումները, Կենտրոնական Ասիայի ուղղությամբ, խմբավորման փոխարեն, ավիացիոն բաղադրիչով ստեղծվել են Արագ արձագանքման հավաքական ուժերը (ԱԱՀՌԻ) (Կանտ քաղաքի բազան՝ Ղրղզստանում): Հավաքական անվտանգության համակարգը ներառում է նաև միավորված համակարգերի խմբավորումներ (հակաօդային պաշտպանության (ՀՕՊ), հետախուզության, կապի, կառավարման և այլն) և ՀԱՊԿ-ի միավորված շտաբը: Այսօր ՀՕՊ միավորված համակարգը (ՄՀ) գոյություն ունի ոչ թե ՀԱՊԿ-ի, այլ ԱՊՀ հենքի վրա, բայց, փաստորեն, համագործակցում և համատեղ դասընթացներին ակտիվորեն մասնակցում են միայն ՀԱՊԿ-ի երկրները: Հենց դա է պատճառը, որ ՀԱՊԿ-ը որոշել է ստեղծել ՀՕՊ սեփական ինտեգրված համակարգ՝ նախատեսված հավաքական անվտանգության տարածաշրջանի համար:

ՀԱՊԿ-ը, ըստ նորմատիվաիրավական հիմքի, ձևավորել է անհրաժեշտ ուժեր ու

<sup>4</sup> Մինասյան Ս., Ռուսաստանը, ԵՍՊԴ-ն և Հարավային Կովկասի անվտանգությունը, «21-րդ դար», թիվ 4 (18), 2007:

<sup>5</sup> От боеспособной армии к современной (интервью Министра обороны Армении М. Арутюняна), «Ноев ковчег». 2007. №10 (121).

միջոցներ կառույցի առջև ծառայած բոլոր խնդիրները լուծելու համար: Ըստ էության, կառավարման և ապահովման գործող համակարգն ի գորու է ապահովելու տարածաշրջանային կայունությունը:

Հայաստանի դեպքում փորձագետները տարակարծություններ ունեն ՀԱՊԿ-ի դերի և կարևորության վերաբերյալ, թեպետ հենց սկզբից էլ մեր երկիրն այս ռազմական միության ձևավորման կողմնակից էր: Անկախ համոզմունքներից, պետք է ընդունել, որ ճանաժամային գործընթացների պայմաններում հետխորհրդային տարածքում բռնկվող և մարող բախումների պարագայում ՀԱՊԿ-ը դիտարկվում է որպես կայունացնող կառույց:

Վտանգների համալիր բնույթը, բազմաբևեռությունը և անկանխատեսելիությունը, որոնք կապված են տեղեկատվական տեխնոլոգիաների տարածման հետ, պահանջում են ոչ միայն անվտանգության ապահովում, այլև համակարգային մոտեցման մշակում, անցում համալիր անվտանգության հայեցակարգին, որի հիմքում ոչ միայն ռազմական և տեխնիկական, այլև գոյություն ունեցող հիբրիդային վտանգների կանխարգելման միջոցառումներն են, ինչպես նաև ապագա աղետների անընդհատ վերլուծությունը և կանխարգելումը:

Այս առումով, բացի ռազմական գործողություններից, կարևորվում է հակազդումն այնպիսի վտանգներին, ինչպիսիք են զանգվածային ոչնչացման զենքի տարածումը, ահաբեկչությունը, թմրանյութերի առևտուրը, անօրինական միգրացիան, կլիմայի փոփոխությունը, համաճարակները, պարենային անբավարարությունը և այլն:

Հայաստանը, ունենալով դաշնակիցներ, այնուամենայնիվ, բարդ դրության մեջ է, քանի որ ընտրության հնարավորությունը շատ սահմանափակ է, իսկ համագործակցությունը՝ հաճախ մակերևութային և ոչ ամուր:

Ընդհանրացնելով նշենք, որ կայունությունը շատ կարևոր է Հայաստանի Հանրապետության համար, իսկ թե վերոնշյալ համակարգերից որը կարող է դա ապահովել առավելագույն չափով, բնավ հռետորական հարցադրում չէ: Երկրում ձևա-

վորվել է ուժերի որոշակի հաշվեկշիռ, որը մի կողմից հենվում է Հավաքական անվտանգության կազմակերպության պայմանագրի վրա, իսկ մյուս կողմից՝ Արևմուտքը փորձում է հանրապետությունում կառավարել որոշակի գործընթացներ՝ ամուր հիմք ունենալով Ադրբեջանում և Վրաստանում: Սակայն, ապահովված կայունություն ասելով չի ենթադրվում միայն պատերազմների բացակայություն: Աշխարհը հենվում է «լավ սրված դանակների» վրա, որոնք էլ ներկայացնում են ուժերի հաշվեկշիռ, իսկ ՀՀ-ի համար այդ հենակետը, մեր կարծիքով, Ռուսաստանն է:

Հայաստանի տարածքը, անվտանգության տեսանկյունից, նման է ձգված զսպանակի, որի թուլանալու դեպքում կարող են ակտիվանալ ռազմական բախումները, հաճախ նաև՝ արտաքին գործոնների ազդեցությամբ: Հայաստանին պետք է ուժերի հաշվեկշիռ, բայց ոչ միայն ռազմական, այլև տնտեսական, նորարարական ու գիտական:

Միաժամանակ, հարկ է նշել, որ պատերազմ հրահրվում է ոչ թե հարձակվողի ուժեղ լինելու, այլ հարձակման օբյեկտի թուլության պատճառով: Հետևաբար՝ դեպի խաղաղություն տանող ճանապարհը պետք է անցնի ոչ միայն ռազմական գործողությունների, այլև այլընտրանքային լուծումների միջով: Հայաստանը պետք է ունենա տնտեսության արդիականացման, բազմազանեցման և նորարարական զարգացման հստակ չափորոշիչներ: Հայաստանի նախաձեռնությունները պետք է ուղղորդվեն ըստ «Խաղաղություն՝ զարգացման միջոցով» բանաձևի: Երկրի անվտանգության հնարավոր սպառնալիքներին հակազդելու համար պետք է հաղթահարվի տնտեսության բոլոր ոլորտների խոցելիության հիմնախնդիրը: Եվ այս ամենը պետք է իրագործվի համակարգային քաղաքականությամբ, իսկ մարտունակ ուժային կառույցների ձևավորումը պետք է ուղեկցվի ազգային բարձր տեխնոլոգիական արդյունաբերության և գիտական ներուժի զարգացմամբ, արդյունավետ կառուցվածքային ինստիտուտների կայացմամբ, որոնք կարող են նպաստել գիտության և արտադրության կապի ամրապնդմանը:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Մինասյան Ա., Ռուսաստանը, ԵՍՍԴ-ն և Հարավային Կովկասի անվտանգությունը, «21-րդ դար», թիվ 4 (18), 2007:
2. SIPRI: Расходы на вооружения в мире достигли рекордного уровня. События в мире - оценки и прогнозы из Германии и Европы | DW | 28.04.2019.
3. Коданева С.И. (2020), Гибридные угрозы» безопасности России: выявление и противодействие // Контуры глобальных трансформаций: политика, экономика, право. Т. 13. № 2. С. 44–71. DOI: 10.23932/2542-0240-2020-13-2-3.
4. Котанджян Г. С., Некоторые перспективы архитектуры безопасности на Южном Кавказе в свете политики США // Вопросы региональной безопасности. Сборник статей, Ереван, Центр стратегического анализа «Спектр», 2005.
5. От боееспособной армии к современной (интервью Министра обороны Армении М. Арутюняна), «Ноев ковчег», 2007, №10 (121).

**Сусанна АГАДЖАНЫН**

*Кандидат экономических наук, АГЭУ*

ТРАЕКТОРИЯ ПАНДЕМИИ

### ՏՋՈՂՆԱԿ ԳՐՄՈՒԼԱ ՍՈՒՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ...

Национальная безопасность включает в себя два компонента. Первый нацелен на Россию как на ключевое звено в системе коллективной безопасности. Другой - евроатлантический, который определяет политику интеграции Армении в процесс формирования новых структур европейской безопасности, развития армяно-американского сотрудничества. Сложный характер, множественность и непредсказуемость угроз требуют не только обеспечения безопасности, но и разработки системного подхода, перехода к концепции комплексной безопасности, в основе которой не только военно-технические меры, но и меры по предотвращению существующих гибридных угроз.

С точки зрения безопасности территория Армении похожа на натянутую пружину, где военные конфликты могут обостриться, часто под воздействием внешних факторов. Армении нужен баланс сил, но не только военный, но и экономический, инновационный и научный.

**Ключевые слова:** *мир, стратегия, стабильность, развитие, ОДКБ, высокие технологии, научный потенциал*

**Susanna AGHAJANYAN**

*PhD in Economics, ASUE*

PANDEMIC TRAJECTORY

### COMPLEX FORMULA OF FINDING PEACE...

Armenia's national security is based on two components. The first is aimed at Russia as a key link in the collective security system. The other is Euro-Atlantic, which determines the policy of Armenia's integration into the process of forming new structures of European security, developing the Armenian-American cooperation. The complex nature, multiplicity and unpredictability of threats require not only security provision, but also the development of a systematic approach, a transition to the concept of integrated security, which is based not only on military-technical measures, but also on measures to prevent existing hybrid threats.

From a security point of view, the territory of Armenia is like a stretched spring where military conflicts can escalate, often under the influence of external factors. Armenia needs a balance of power, not only a military one, but also an economic, innovative and scientific one.

**Key words:** *peace, strategy, stability, development, CSTO, high technologies, scientific potential*